# Ծ. Պ. ԱՂԱՅԱՆ

(Ծննդյան 60-ամյակի առթիվ)

Բոլորեց Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, բազմամյա մանկավարժ, հասարակական-քաղաքական գործիչ Ծատուր Պավլովիչ Աղայանի ծննդյան 60 տարին:

Ծ. Պ. Աղայանը ծնվել է Ադրբեջանի Փիփի հայկական գյուղում, աշխատավոր գյուղացու ընտանիքում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո նա պաշտոնավարել է հայկական դպրոցներում որպես ուսուցիչ, ուսմասվար, տեսուչ, ապա ընդունվել Մոսկվայի պատմա-փիլիսոփայական ինստիտուտը:

1937 թ. սկսել է դասախոսական աշխատանք Բաքվի մանկավարժական ինստիտուտում, այնուհետև ավարտել Մոսկվայի համալսարանի ասպիրանտուրան և 1941 թ. պաշտպանել բեկնածուական դիսերտացիա Աբաս-Կուլի-աղա Բաքիխանովի կյանքի ու գործի մասին: Շարունակելով դասախոսական ու գիտահետազոտական աշխատանքը Բաքվում, Ծ. Պ. Աղայանը 1947 թ. պաշտպանում է դոկտորական դիսերտացիա՝ «Գյուղացիական ռեֆորմը Ադրբեջանում» թեմայով:

1948 թ. Աղայանը հրավիրվում է Երևան, ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտ, նշանակվելով ավագ գիտաշխատակից, ապա բաժնի վարիչ և դիրեկտորի տեղակալ: Շուրջ քառորդ դար Ծ. Պ. Աղայանը աշխատում է հայ և Անդրկովկասի մյուս ժողովուրդների պատմության պրոբլեմների ուսումնասիրության մարզում:

Լայն է եղել Ծ. Պ. Աղայանի հետաքրքրությունների շրջանակը, բազմերանգ՝ նրա գիտական գործունեությունը: Ագրարային հարցը, սոցիալ-տնտեսական հարաբերությունները ու դասակարգային պայքարը, ազգային-ազատագրական շարժումները Անդրկովկասում, 1905—1907 թթ. հեղափոխությունը Ռուսաստանում ու Անդրկովկասում, սովետական կարգերի հաստատումը և սոցիալիստական շինարարությունը Հայաստանում, կոմունիստական կուսակցության պատմությունը, ազգամիջյան հարաբերությունները, Անդրկովկասի ժողովուրդների դարավոր բարեկամությունը, հայ ժողովրդի պատմական կապերը Ռուսաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Հունգարիայի հետ, ահա այն պրոբլեմները, որոնք բնութագրում են Ծ. Պ. Աղայանի գիտական ուսումնասիրությունների շրջանակը: Նա նախաձեռնում է կոլեկտիվ աշխատություններ, խմբագրում Հայաստանի, Անդրկովկասի ու Ռուսաստանի գիտնականների համատեղ ջանքերով իրականացված գործերը, հանդես է գալիս միութենական և միջազգային գիտաժողովներում, միաժամանակ ծավալելով գիտա-կազմակերպչական արդյունավետ գործունեություն:

Ծ. Պ. Աղայանը մշտապես հանդես է եկել որպես իսկական հայրենասեր, ինտերնացիոնալիզմի ու ժողովուրդների բարեկամության պրոպագանդիստ: Նա տարիներ շարունակ կարդացել է ՍՄԿԿ պատմության կուրս, ղեկավարել ՍՄԿԿ պատմության ամբիոն, դաստիարակելով հազարավոր ուսանողների: Հահախակի հանդես է եկել որպես դիսերտանտների ընդդիմախոս, ղեկավարել բազմաթիվ ասպիրանտների, որոնք այժմ գիտության բեկնածուներ ու դոկտորներ են:

Ծ. Պ. Աղայանը 1952 թ. ընտրվել է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, իսկ 1968 թ.՝ ակադեմիկոս: Նշանակալի են Աղայանի՝ հասարակական-քաղաքական գործչի, գիտության աշխատանքի կազմակերպչի ու ղեկավարի ծառայությունները: Նա հանիցս ընտրվել է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ և Հայաստանի կոմկուսի Կենտրոնական կոմիտեի կազմում, աշխատել է որպես ՀԿԿ Կենտկոմի գիտության ու ԲՈՒՀ-երի բաժնի վարիչ, ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի դիրեկտոր և այժմ որպես ակադեմիկոս-քարտուղար ղեկավարում է ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքը:

ՍՍՀՄ Գերագույն սովետը բարձր գնահատելով Ծ. Պ. Աղայանի բեղմնավոր գործունեությունը գիտության զարգացման բնագավառում, նրան պարգևատրել է «Պատվո նշան» և Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով: Ցանկանանք նրան հաջողություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ:

Գ. ԳԱԼՈՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ